

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0
Գ 888

Գրիգորյան Ատեփան

Գ 888 Հայկական թավջա հեղափոխություն/Ս. Գրիգորյան.- Եր.:
Էդիթ Պրինտ, 2018.- 184 էջ:

Գրքում ներկայացվում է վերջին մի քանի տարիներին Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը, ինչպես նաև՝ երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացների ժամանակագրությունն ու վերլուծությունը՝ սկսած 2018 թ. մարտի 31-ից (երբ ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանն իր կողմնակիցների հետ Գյումրի քաղաքի կենտրոնական Վարդանանց հրապարակից սկսեց քայլարշավը մինչև Երևան) մինչև մայիսի 8-ը (երբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստում Նիկոլ Փաշինյանն ընտրվեց վարչապետ):

ՀՏԴ 32.001
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-75-259-4

© Էդիթ Պրինտ
© Ս. Գրիգորյան

**ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆ.
«ՄԵՆՔ ՈՒՆԵՆՔ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՆԴԱՏԸ` ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՆԴԱՏԸ»**



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից. Հաղթանակի քայլ առ քայլ նվաճումը 6

Մաս I

Ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը վարչապետ Սերժ Սարգսյանի հետ (ապրիլի 22, առավոտյան ժամը 10:00, Երևանի կենտրոնում գտնվող «Արմենիա Մարիոթ» հյուրանոց) 12

Գլուխ 1. Կարո՞ղ է արդյոք հնագույն պատմությունը նպաստել հայկական ժողովրդավարական ժամանակակից պետության կառուցմանը 17

Գլուխ 2. Հայաստանը պարադոքսների և քաղաքացիական փայլուն հասարակության երկիր է 19

Գլուխ 3. Ապրիլյան «թավշյա հեղափոխությունը» Հայաստանում 27

Գլուխ 4. Ինչո՞վ էին այդպես «զգվեցրել» Հայաստանի իշխանությունները հայ ժողովրդին 36

Գլուխ 5. Հայաստանում քաղաքական գործընթացները սկսել են զարգանալ քաղաքագիտության օրենքներին համապատասխան, այլ ոչ թե քրեաօլիգարխիկ ընկալումներով 40

Գլուխ 6. Ինչ է, այնուամենայնիվ, տեղի ունեցել Հայաստանում.. 48

Գլուխ 7. Քաղաքացիական հասարակության և ՁԼՄ-ների դերը հայաստանյան «թավշյա հեղափոխության» ընթացքում 51

Մաս II

2018 թվականի մարտի 31-ից մինչև մայիսի 8-ը տեղի ունեցած իրադարձությունների ժամանակագրություն և վերլուծություն 58

Գլուխ 1. Նիկոլ Փաշինյանի «խաչարշալն» ու գունավոր ծխազլանակները ՀՀ Ազգային ժողովում 62

Գլուխ 2. Ընդդիմության անհնազանդության ակցիաների սկիզբը Երևանում 64

Գլուխ 3. Անհնազանդության ակցիաների հզորացումը և տարածումը Հայաստանի մարզերում: Սերժ Սարգսյանի ընտրությունը Հայաստանի վարչապետի պաշտոնում 70

Գլուխ 4. Բողոքի համազգային ակցիաներն ու մասշտաբային բռնաճնշումները ցուցարարների նկատմամբ: Սերժ Սարգսյանի հրաժարականը 90

Գլուխ 5. 1 մայիսի, 2018 թվական. ՀՀ-ի քաղաքական «ինքնասպանությունը»: 2 մայիսի, 2018 թվական. համընդհանուր գործադուլ: 8 մայիսի, 2018 թվական. Նիկոլ Փաշինյանի ընտրությունը ՀՀ վարչապետի պաշտոնում 129

Վերջաբան. Հաղթանակի ոգեշնչող ներգործությունը 179



ՀԱՂԹԱՆԱԿԻ ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ ՆՎԱՃՈՒՄԸ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՃ

Գրքում ներկայացվում է վերջին մի քանի տարիներին Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը, ինչպես նաև՝ երկրում տեղի ունեցող քաղաքական գործընթացների ժամանակագրությունն ու վերլուծությունը՝ սկսած 2018 թ. մարտի 31-ից (երբ ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանն իր կողմնակիցների հետ Գյումրի քաղաքի կենտրոնական Վարդանանց հրապարակից սկսեց քայլարշավը մինչև Երևան) մինչև մայիսի 8-ը (երբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստում Նիկոլ Փաշինյանն ընտրվեց վարչապետ):

Չափազանց կարևոր է, որ Հայաստանում հնարավոր եղավ խաղաղ իշխանափոխություն իրակա-

նացնել Սերժ Սարգսյանի և Հայաստանի հանրապետական կուսակցության հաստատած կոշտ և ավտորիտար ռեժիմի, հայկական ՋԼՄ-ների սահմանափակումների (և մասնավորապես՝ Հայաստանի հանրային հեռուստատեսությունում նրանց համար անցանկալի քաղաքագետների և փորձագետների «սև ցուցակի» առկայության) և ոստիկանների թվաքանակի մի քանի անգամ մեծացման պայմաններում:

Նիկոլ Փաշինյանն իր թիմի և քաղաքացիական հասարակության ակտիվ մասի հետ միասին՝ Հայաստանի քաղաքացիների զանգվածային աջակցությամբ, կարողացավ ի կատար ածել «թավշյա հեղափոխությունը», որը ոչնչացրեց ավտորիտար ռեժիմի բալաստը:

Իր իշխանության տարիներին ՀՀԿ-ն փորձում էր հայ հասարակությանը պարտադրել այն գաղափարը, որ «կյանքում գլխավորը փողն ու իշխանությունն են»: Նման հավատամքը բացասաբար է ազդել գործող իշխանությունների անաչառ գործունեության վրա: Բայց մի օրինակ հատկապես կարևոր է, քանի որ ՀՀԿ-ն փողի և հարուստ մարդկանց արտոնյալ դերը փորձ արեց ամրագրել Հայաստանի ընտրական օրենսգրքում:

Այսպես, մինչև 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունները ՀՀԿ-ն Ընտրական օրենսգրքում կատարեց փոփոխություններ, որոնցով ներմուծվեց այսպես կոչված՝ «քվեարկության ռեյտինգային համակարգը»: Նրանք ականջալուր չեղան ոչ ընդդիմադիր կուսակցությունների քննադատություններին, ոչ քաղաքացիական հասարակության դիրքորոշմանը, որոնք նախազգուշացնում էին Հայաստանի քաղաքական համակարգի համար ռեյտինգային ընտրակարգի վտանգավորության մասին: Ակնհայտ է, որ աղքատ երկրում մաժորիտար համակարգը, որն ամուր կապված էր կուսակցական ցուցակների հետ («քվեարկության ռեյտինգային համակարգի» իմաստը հենց սա է), պարզապես կոչնչացներ ցանկացած քաղաքական երկխոսություն ընտրությունների ժամանակ և ընտրական գործընթացում կհանգեցներ պարզ ընտրակաշառքի բաժանման:

Իշխանությունների նման քաղաքականության հետևանքները ակնառու դրսևորվեցին 2017 թվականի ապրիլի 2-ի ԱԺ ընտրու-



Ժողովրդական
անհնազանդության այիք

յուններում, երբ ընտրական գործընթացի ժամանակ որոշիչ գործոն էր հանդիսանում վարչական և ֆինանսական ռեսուրսների արժևորման աստիճանը: Այդ իսկ պատճառով կուսակցությունների ծրագրերը և քաղաքական ուժերի միջև երկխոսությունները մղվեցին երկրորդ պլան, և ընտրություններում հիմնական դեր խաղացին ընտրարշավի մասնակիցների վարչական և ֆինանսական հնարավորությունները:

Այս ամենը հասկանալի էր, քանի որ փողի և վարչական ռեսուրսի դերակատարման ուժեղացման մեխանիզմն էր դրված Հայաստանի ընտրական օրենսգրքում:

Ինչպիսի՞ն Հայաստան էին ցանկանում կառուցել ՀՀ առաջնորդները: Երկիր, որտեղ փողն ունի աստվածային նշանակություն, որտեղ տնտեսությունը մենաշնորհային է, իսկ քաղաքական համակարգը մոտ է միակուսակցականությանը, որտեղ քրեական հեղինակությունները կարևոր դեր են խաղում երկրի կյանքում: Եթե դա էր նրանց երազանքը, ապա պետք է նկատել, որ այն գրեթե իրականացել է: Չէ որ խորհրդարանում նրանց վերահսկողության տակ էր մանդատների 60%-ը: Նույն պատկերն է նաև տնտեսության առումով. ՀՀ-ն կամ կուսակցության մերձավոր օլիգարխները վերահսկում են Հայաստանի տնտեսության առյուծի բաժինը:

Հայ ժողովուրդն ունի փառավոր, քայքայ դժվարին պատմություն: Վերջին յոթ հարյուրամյակի ընթացքում մենք ունեցել ենք մարդկային և տարածքային ահռելի կորուստներ: Առաջին անգամ, մեծ ընդմիջումից հետո, հայ ժողովուրդը 1991 թ. ձեռք բերեց անկախություն, պաշտպանեց իր հայրենակիցների իրավունքներն Արցախում: Մենք թույլ չտվեցինք, որ Արցախում հայերի նկատմամբ էթնիկ զտում իրականացվեր: Միաժամանակ ժողովուրդը լծվեց անկախ և ժողովրդավար Հայաստան կառուցելու գործին:

Իսկ ինչպե՞ս այս ամենին արձագանքեցին Հայաստանի իշխանությունները՝ ՀՀ-ի գլխավորությամբ: Նրանք մտացածին պատճառներով բանտ նստեցրին Արցախյան ազատամարտի հերոսներ Սամվել Բաբայանին և Ժիրայր Սեֆիլյանին: Խայտառակություն է, երբ կոռումպացված չինովնիկներն ու օլիգարխներն ազատորեն զբոսնում են իրենց կողմից կողոպտված երկրի փողոցներում, իսկ

հերոսները գտնվում են բանտերում: Խայտառակություն է, երբ աղքատ երկրում Սերժ Սարգսյանը տեղաշարժվում է նվազագույնը 15 մեքենաների, անձնական թիկնապահների և ՃՌ-ի ուղեկցությամբ:

Սակայն այսօր ի հայտ է եկել քաղաքական ուժ, որն իր առաջնորդ Նիկոլ Փաշինյանի հետ միասին Հայաստանի քաղաքացու մեջ սերմանել է հույս, որ մեր երկրում ամեն ինչ կփոխվի, իսկ ավելի ուշ՝ նաև կկարգավորվի: Հենց Նիկոլ Փաշինյանի և նրա թիմի գործողությունները հանգեցրին նրան, որ երկրում հաստատված ավտորիտար ոեժիմը սկսեց փլվել: Ի հայտ եկավ Քաղաքացին, ով հավատում է, որ իր յուրաքանչյուր քայլը հիմք է ստեղծում ուժեղ քաղաքացիական հասարակության ստեղծման համար:

Քայքայ ինչպե՞ս այդ ամենը հնարավոր դարձավ: Պարզվեց, որ մենք գործեցինք հին հույների նման: Մենք ժամանակավորապես հրաժարվեցինք ներկայացուցչական ժողովրդավարությունից և Հայաստանի գլխավոր՝ Հանրապետության հրապարակում ընտրեցինք

Հիրավի՝ համազգային շարժում



երկրի Առաջնորդ: Այդպես էին վարվել հին հույները 2500 տարի առաջ:

Իսկ արդեն հետո՝ 2018 թվականի մայիսի 8-ին այս փաստը ամրագրվեց ԱԺ նիստում. Նիկոլ Փաշինյանը ընտրվեց երկրի վարչապետ: Այս իրադարձությունը մտավ քաղաքագիտության պատմության մեջ՝ որպես հայ քաղաքացիական հասարակության ակտիվության և ինտելեկտուալության փայլուն օրինակ, ինչի շնորհիվ և հասարակությունը դուրս եկավ երկրում ստեղծված քաղաքական ճգնաժամից՝ օգտագործելով հին հույների փորձը:

«Թավշյա հեղափոխության» շնորհիվ երկար տարիներ վախի ու լճացման մթնոլորտում գտնվող մարդիկ սկսեցին ժպտալ, գրկախառնվել, ողջունել միմյանց: Հայերը բարի և աշխատասեր ժողովուրդ են: Եվ որևէ մեկն այլևս չի կարող անտեսել նրանց, իսկ ով փորձի, նա ժողովրդի հիշողությունից հավերժ կջնջվի:

Գիրքը բաղկացած է երկու մասից:

Առաջին մասն ընդգրկում է յոթ գլուխ, որոնցում հեղինակային վերլուծություններ են Հայաստանում տեղի ունեցած գլխավոր իրադարձությունների վերաբերյալ՝ սկսած 2018 թվականի մարտի 31-ից մինչև մայիսի 8-ը: Այս ամենը, իհարկե, դիտարկված է վերջին տարիների իրադարձությունների զարգացման համատեքստում՝ նկատի ունենալով նաև դրանց ազդեցությունը երկրում տիրող իրավիճակի վրա:

Երկրորդ մասի հինգ գլուխները նվիրված են հիմնական ակցիաների, ընդդիմության և իշխանությունների գործողությունների ժամանակագրությանը, որը շատ կարևոր ու անհրաժեշտ է, որպեսզի դրանք պահպանվեն և փոխանցվեն մեր քաղաքացիների ապագա սերնդին: Պաշտոնյաների և ընդդիմության շատ գործողություններ մատուցված են հեղինակի մեկնաբանություններով ու գնահատմամբ:

Երախտագիտությունս եմ հայտնում ընկերոջս՝ Մկրտիչ Կարապետյանին, Շավարշ Կարապետյանին և տիկնոջս՝ Մարիա Ամարյանին գրքի աշխատանքների հետ կապված արժեքավոր դիտողությունների համար:

*Սյրեփան Գրիգորյան
Քաղաքագետ, Գլոբալիզացիայի և փարածաշրջանային
համագործակցության վերլուծական կենտրոնի ղեկավար
(Հայաստան)*



**ԸՆԳԴԻՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ
ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԻ
ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏ
ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ՀԱՆԳԻՊՈՒՄԸ**

ՄԱՍ I

Մարտի 22,
առավոտյան ժամ 10:00,
Երևանի «Արմենիա
Մարիոթ» հյուրանոց



«Քայլ արև, մերժիր Մերժին»

Մերժ Սարգսյանի համար ճակատագրական այս հանդիպումը ճանապարհի բացեց հայ ժողովրդի ծաղկման համար:

«Ես ուրախ եմ, որ Դուք արձագանքեցիք բանակցելու վերաբերյալ իմ բազմաթիվ կոչերին, սակայն ես այնքան էլ լավ չեմ պատկերացնում, թե ինչի մասին մենք կարող ենք խոսել տասնյակ լրագրողների ներկայությամբ», - հայտարարեց Մերժ Սարգսյանը Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման սկզբում:

Ի պատասխան՝ Նիկոլ Փաշինյանն ընդգծեց, որ հավանաբար ինչ-որ «թյուրըմբռնում» կա. «Երբ ես խոսեցի պարոն Սարգսյանի հետ (<< Նախագահ), հստակ պնդեցի, որ խոսքը վերաբերում է ոչ թե Ձեր առաջարկած երկխոսությանը, այլ մեր առաջ քաշած պայմաններին: Ես եկել եմ այստեղ քննարկելու Ձեր հրաժարականի և իշխանության փոխանցման պայմանները, և այս պատճառով էլ առաջարկում եմ Ձեզ չօգտագործել «երկխոսություն» բառը»:

Մերժ Սարգսյանն ընդգծեց, որ սա երկխոսություն չէ, բանակցություն չէ, այլ պարզապես ուլտիմատում, շանտաժ՝ ուղղված պետությանն ու օրինական իշխանություններին: «Դուք չեք գիտակցում պատասխանատվության աստիճանը, Դուք դաս չեք քաղել մարտի 1-ի իրադարձություններից (2008 թվական - Ս. Գ.): Եթե Դուք շարունակեք խոսել նույն տոնով, ապա ինձ ընդամենը մնում է Ձեզ խորհուրդ տալ վերադառնալ օրինական դաշտ և գործել տրամաբար-

նության սահմաններում: Հակառակ դեպքում ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Ձեզ վրա: Ընտրեք», - ասաց Հայաստանի վարչապետը:

«Մեզ հետ ոչ մեկը չի համարձակվի խոսել սպառնալիքի լեզվով: Դուք չեք պատկերացնում երկրում տիրող իրավիճակը, իսկ այն այնպիսին չէ, ինչպես 10-15 օր առաջ էր: Իրավիճակը փոխվել է, Դուք չունեք այն իշխանությունը, ինչի մասին Ձեզ զեկուցում են: Հայաստանի իշխանությունն անցել է ժողովրդի ձեռքը», - ի պատասխան՝ ասաց Նիկոլ Փաշինյանը:

Մերժ Սարգսյանը հակադարձեց, որ 7-8 տոկոս ծայն հավաքած խմբակցությունը իրավունք չունի խոսել ժողովրդի անունից, և ինքն այլևս ցանկություն չունի խոսակցությունը շարունակելու: «Եթե Դուք չեք ընդունում պետության օրինական պահանջները, ցտեսություն», - հայտարարեց Մերժ Սարգսյանը և հեռացավ հանդիպման վայրից:

Իհարկե, ընդհատելով հանդիպումը, Մերժ Սարգսյանը պարտվեց երկրի քաղաքացիների աչքում: Ռեպլիկներից արդեն տեսանելի էր, թե նա որքան է կտրված իրականությունից: Թվում էր՝ Մերժ Սարգսյանը չգիտեր, որ հանդիպման էր գնում, որի ընթացքում քննարկվելու էին իր հրաժարականի պայմանները ՁԼՄ-ների ներկայությամբ:

Բացի դրանից, Նիկոլ Փաշինյանի հետ նրա զրույցի տոնից երևում էր, որ նա չգիտեր նույնիսկ, որ ընդդիմության ապրիլյան հանրահավաքներին մասնակցում էին շատ ավելի մեծաթիվ մարդիկ, քան նշված 7-8%-ը: Նման բան կարող էր ասել այն մարդը, ով լիովին կտրված էր իրականությունից կամ ապրում էր ինչ-որ «վիրտուալ տարածության մեջ»:

Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ ապրիլի 22-ին ողջ Հայաստանը «փոթորկվում» էր՝ բառի ուղղակի իմաստով: Անհնազանդության ակցիաները (հանրահավաք, քայլերթ, ճանապարհների և փոխադրամիջոցների արգելափակում և այլն) անցկացվում էին գործնականում բոլոր քաղաքներում, որոնց մասնակցում էին ոչ միայն մեծահասակները, այլև դպրոցականները: Հայկական ընդդիմությանն աջակցելու նպատակով կազմակերպվող անհնազանդության ակտիվ ակցիաներն անցկացվում էին ոչ միայն Հայաստանում, այլև

սիյուեցում՝ ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում, Չեխիայում, Լեհաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, Արգենտինայում և այլուր:

Նման անհաջող հանդիպումից հետո, քնականաբար, արդեն անիմաստ էր ընդդիմանալը, և ապրիլի 23-ին՝ օրվա երկրորդ կեսին, Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց՝ Հայաստանի վարչապետի պաշտոնում մնալով ընդամենը մեկ շաբաթ: Հայ ժողովրդին ուղղված իր վերջին ուղերձում նա մասնավորապես ասել է. «... Նիկոլ Փաշինյանը ճիշտ էր: Ես սխալվեցի: Ստեղծված իրավիճակում մի քանի լուծումներ կան, որոնցից ոչ մեկին ես չեմ գնա: Դա իմը չէ: Ես թողնում եմ երկրի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը: Փողոցային շարժումը իմ վարչապետության դեմ էր: Ես կատարում եմ ձեր պահանջը...»:

Փաստորեն Նիկոլ Փաշինյանը «օգնեց» Սերժ Սարգսյանին՝ վերադառնալու իրական աշխարհ, որտեղ նրան ոչ ոք չէր սպասում:

2008 թվականի մարտի 1-ին, որի մասին հիշատակեց Սերժ Սարգսյանը, Երևանի կենտրոնում իշխանություն-ընդդիմություն հակամարտության արդյունքում սպանվեցին 8 ցուցարար և Ներքին գործերի 2 ծառայող: Մարդկանց մահվան համար մինչև հիմա որևէ մեկը չի պատժվել: «Կարծում եմ, որ 2008 թվականի մարտի 1-ի հանցագործությունների բացահայտումը կարևորագույն խնդիրներից մեկն է: Մեր պատմության այս էջը պետք է ամբողջովին բացահայտված լինի», - այս մասին ապրիլի 30-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Նիկոլ Փաշինյանը:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՇԵՂԻՆԱԿՆԵՐ

© Դավիթ Այվազյան	3	© Էդգար Հարությունյան	87
© Էդգար Հարությունյան	6	© Էդգար Հարությունյան	91
© Ռուբեն Պապոյան	9	© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	93
© Sputnik Արմենիա/Ասատուր Եսայանց	12-13	© PHOTOLURE/Հակոբ Անրզաղյան	94
© PAN Photo/Հրանտ Խաչատրյան	14	© Էդգար Հարությունյան	97
© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	20	© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	101
© ARMENPRESS/Մխիթար Խաչատրյան	23	© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	103
© PHOTOLURE/Մելիք Բաղդասարյան	28	© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	104
© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	30	© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	104
© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	32	© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	106-107
© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	34	© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	111
© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	34	© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	112
© PAN Photo/Գրիգոր Եփրեմյան	37	© ARMENPRESS/Էդուարդ Սեպետյան	114-115
© PAN Photo/Նարեկ Ալեքսանյան	38	© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	119
© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	41	© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	121
© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	44	© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	130
© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	46	© Էդգար Հարությունյան	133
© ARMENPRESS/Մխիթար Խաչատրյան	50	© PAN Photo/Նարեկ Ալեքսանյան	135
© Էդգար Հարությունյան	54-55	© ARMENPRESS/Տաթև Դուրյան	139
© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	58-59	© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	142
© Էդգար Հարությունյան	61	© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	146
© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	63	© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	150
© PAN Photo/Կարո Սահակյան	65	© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	153
© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	66	© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	155
© Էդգար Հարությունյան	71	© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	156
© PHOTOLURE/Հայկ Բաղդասարյան	72	© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	159
© Էդգար Հարությունյան	75	© Ռուբեն Պապոյան	162
© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	79	© PHOTOLURE/Հակոբ Անրզաղյան	164
© ARMENPRESS/Գևորգ Պերկուպերյան	79	© ARMENPRESS/Էդուարդ Սեպետյան	167
© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	84	© Ռուբեն Պապոյան	170-171
© PHOTOLURE/Վահրամ Բաղդասարյան	86	© Լուսինե Խանգուլյան	180